ՀՈՂԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱՆՀԱՅՐԵՆԻՔ» ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

ԱՎԱԳՅԱՆ Ք. Ռ.

Հայ սփյուռքում, մասնավորապես ԱՄՆ-ում, հողապահպանության և հայապահպանության գաղափարները պատմական տարբեր շրջափուլերում տարբեր ընկալումներ և դրսևորումներ են ունեցել: Դա բացատրվում է ժամանակի ընթացքում ինչպես բնօրրանի ու հայրենիքի նկատմամբ հայ քաղաքական կուսակցությունների փոփոխվող դիրքորոշումներով, նույնպես և տասնամյակների ընթացքում սփյուռքում տեղի ունեցող սերնդափոխության գործընթացներով, որոնց հետևանքով արտերկրում փոփոխության են ենթարկվել հայրենիքի և ազգության գաղափարներն ընդհանրապես՝ իրենց գործնական դրսևորումներով: Հայաստանի քաղաքական-ռազմավարական շահերի նախկին ընկալումը մեկ դարի ընթացքում (XX դ. սկիզբ - XXI դ. սկիզբ) աստիճանաբար փոխարինվել է համաշխարհայնացման, իսկ առանձին դեպքերում՝ սփյուռքահայության ապրած երկրների ռազմավարական շահերի գերակայությամբ, ինչը և, ընդհանուր առմամբ, հակադրվել ու հակադրվում է Հայաստանի և տարածաշրջանի շահերին:

Հողապահպանության դրսևորումը ԱՄՆ-ի հայության շրջանում

Առաջին աշխարհամարտի (1914-1918 թթ.) *ընթացքում ու դրան հաջորդող տարիներին առավելապես առաջին սերնդի ամերիկահայերի համար հողապահպանության և հայրենի երկրի ու ժողովրդի սատարմանն ուղղված ջանքերը եղել են գործնական ու ծանրակշիռ՝ կրելով թե՛ քաղաքական ու դիվանագիտական, թե՛ հասարակական, տնտեսական ու ռազմական բնույթ: Վերջինս արտահայտվել է ռազմամթերքի, դրամական միջոցների, ինչպես նաև մարդկային ուժի՝ կամավորների առաքումով, որն իրականացվել է գլխավորապես հայ քաղաքական տարբեր կուսակցությունների ու կազմակերպությունների կողմից:*

Պատերազմի հենց սկզբից արտերկրի, մասնավորապես ամերիկահայ մի խումբ ազգայինների ջանքերով հնարավոր է դարձել համախմբել տեղի հայ քաղաքական տարբեր ուղղությունների ներկայացուցիչներին, որոնք ժողովրդի ու հայրենի երկրի համար ճակատագրական այդ պահին, որոշ բացառությամբ, հանդես են բերել միասնաբար գործելու պատրաստակամություն:

Նման առաջին քայլն իրականացվել էր ամերիկահայոց առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանի ջանքերով, որը գաղութի ներսում կազմակերպված ու հավաքական շարժում սկզբնավորելու, ինչպես նաև կովկասահայության շրջանում ծագած ինքնապաշտպանական շարժմանն արձագանքելու նպատակով իր բնակարանում ժողով էր հրավիրել՝ չորս կուսակցությունների

մասնակցությամբ (Սոցիալ դեմոկրատ հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցություն, Վերակազմյալ հնչակյան, Հայ սահմանադրական ռամկավար): Իսկ 1914 թ. նոյեմբերին Բոստոնում հրավիրել է Միջկուսակցական խորհրդաժողով, որն ընդունում է ազգային չորս կուսակցությունների միասնական գործունեության ծրագիր: Խորհրդաժողովին հաջողվում է ԱՄՆ-ի Կոնգրեսի հետ համատեղ Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպանի միջոցով ստանալ ցարական կառավարության համաձայնությունն ու հովանավորությունը՝ Կովկասում ռուսական բանակի կազմում կռվելու պատրաստ ամերիկահայ երիտասարդ կամավորներ առաքելու և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ[1]:

1914 թ. դեկտեմբերին Ամերիկահայոց առաջնորդարանից երկուական ներկայացուցիչների մասնակցությունը Խորհրդաժողովին համազգային բնույթ է հաղորդում հիշյալ միջկուսակցական մարմնին՝ այն վերանվանելով Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախումբ (ԱՊԱՀ)[2]:

Կովկասում հայ կամավորական շարժմանը սատարելու նպատակով հանգանակվում է 160.000 դոլար, ընդ որում, ԱՊԱՀ-ը՝ 60.000, իսկ ՀՅԴ-ն առանձին՝ 100.000: Դաշնակցությունը ընդամենը երկու ամսվա ընթացքում Կովկաս է առաքել 800 կամավոր[3]:

Անտանտի տերությունների առջև Հայ դատը ներկայացնելու նպատակով 1912 թ. Փարիզում հիմնված Ազգային պատվիրակության նախագահ, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանագիտական ներկայացուցիչ Պողոս Նուբարի և Կահիրեում գործող Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) ջանքերով, Եգիպտոսի օրինակով, մի խումբ ամերիկահայերի կողմից (դոկտոր Ս. Մ. Գաբրիելյան, Մ. Սվազլյան (Սվազլը), պատվ. Խ. Կ. Պեննեյան և այլք) ԱՄՆ-ում ստեղծվել էր Ազգային շահերի պաշտպանության միությունը (ԱՇՊՄ): Այն բաղկացած էր հայ երեք քաղաքական կուսակցություններից, Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիներից ու ՀԲԸՄ-ից ընտրված ներկայացուցիչներից: ՀՅԴ-ն հրաժարվել է ենթարկվել Ազգային պատվիրակության և անձամբ Պ. Նուբարի հսկողությանը, գործել է անկախ ընդհուպ մինչև 1917 թ. սկիզբը[4]:

Պ. Նուբարի ջանքերով Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախումբն ու Ազգային շահերի պաշտպանության միությունը համագործակցելով զգալի օգնություն են առաքել Սբ. Էջմիածին՝ ի նպաստ

---

[1] **Ավագյան Ք.,** Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Ե., 2000, էջ 111-112:

[2] Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917-1921 թթ., Պոստոն, 1922, էջ 8:

[3] **Թէոդիկ,** Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 282, **Լազեան Գ.,** Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 202:

[4] Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 9, 10, **Հայկ Վ.,** Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 994:

հայ գաղթականների, Կովկասում ապաստանած փախստականների ու կամավորների: Ծրագրված էր նաև բոլոր միջոցներով սատարել Փարիզի Ազգային պատվիրակությանը՝ Կիլիկիայի ազատագրումը և Եվրոպայում ու Ամերիկայում Հայ դատի պաշտպանությունը հետամտող նրա քաղաքական, դիվանագիտական և ռազմական բնույթի ջանքերին[5]:

1915 թ. սեպտեմբերին ազգային վերոհիշյալ երկու կազմակերպությունները (ԱՊԱՀ և ԱՇՊՄ) միավորվել են որպես Ազգային պաշտպանության Ամերիկայի միություն (ԱՊԱՄ)՝ աջակցելու Փարիզի Ազգային պատվիրակությանը: Միությունը բաղկացած էր ազգային վեց կուսակցությունների ու կազմակերպությունների (Սոցիալ դեմոկրատ հնչակյան, Վերակազմյալ հնչակյան, Հայ սահմանադրական ռամկավար, ՀԲԸՄ, Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիներ) ներկայացուցիչներից: Նոր միության կազմում էին Մ. Սվազլյանը (ատենապետ), Ա. Նազարեթյանը (ատենադպիր), Բ. Կյուլեսերյանը և այլք: Միավորման գործում մեծ էր ամերիկահայ ավետարանական եկեղեցու քարոզիչներ՝ վերապատվելիներ Եարտըմյանի, Կ. Մանավյանի, Մ. Գալայճյանի դերը[6]:

Ազգային պաշտպանության Ամերիկայի միության ջանքերով կազմակերպվում են հայրենանպաստ հանգանակություններ: Միությունն իր գոյության ընթացքում նյութական ու բարոյական զգալի օգնություն է տրամադրում նաև Կիլիկիո կաթողիկոսին, Կ. Պոլսի հայոց պատրիարքին, Թիֆլիսում Հայաստանի վերաշինության հանձնախմբին, ինչպես նաև՝ Ամերիկյան նպաստամատույց ընկերությանը, Ռուս-ամերիկյան նպաստից ընկերությանը և այլոց: Միությունը բժշկական օգնություն, սնունդ, հագուստեղեն է առաքել Կովկասում ապաստանած հայ փախստականներին, մշտապես կապ պահպանել ԱՄՆ-ի պետական շրջանների ու հայասեր ամերիկացիների հետ, ջանքեր գործադրել վերականգնելու ՀՅԴ-ի հետ համագործակցությունը[7]:

Ամերիկահայերն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո Կովկասում, ապա՝ Կիլիկիայում կազմակերպված կամավորական շարժումներին՝ սկսած 1915 թ. Վանի ինքնապաշտպանական կռիվներից մինչև 1918 թ. Արարայի ճակատամարտը՝ Անտանտի տերությունների, ցարական Ռուսաստանի և Ֆրանսիայի

---

[5] *The Armenians in Massachusetts, Boston, 1937, p. 52.* ***Թէոդիկ,*** *նշվ. աշխ., էջ 283:*

[6] *Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 9, 10,* ***Ճիզմէճեան Մ. Գ.,*** *Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրէզնօ, 1930, էջ 202:*

[7] ***Կիրակոսյան Ջ.,*** *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916 թթ.), Ե., 1965, էջ 187:*

զորամիավորումների հետ կողք կողքի քաջաբար մարտնչելով գերմանա-թուրքական ուժերի դեմ:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ից և եվրոպական երկրներից տարբեր ճա-նապարհներով հայրենի երկրի ազատագրմանը մասնակցելու նպատակով Կովկասյան ռազմաճակատ է մեկնել շուրջ 3.000 հայ[8]: Ամերիկահայությունը, Կովկաս կամավորներ ուղարկելուց բացի, զգալի նյութական նպաստ է հատկացրել վերոհիշյալ շարժմանը: Այսպես, ողջ ամերիկահայությունը կովկասյան կամավորական շարժմանը տրամադրել է շուրջ 342.000 դոլար, իսկ առանձին ԱՄՆ-ի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն 1915-1917 թթ. Թիֆլիսի Ազգային բյուրոյին է ուղարկել 328.047 ռուբլի գումար[9]:

Բայց և այնպես, Կովկասում կամավորական շարժման լուծարումով արևմտահայության շրջանում չի մարել հայրենի տարածքներն ազատագրելու և ժողովրդի ապրելու բնական իրավունքը պաշտպանելու սրբազան զգացումը, և նա ձեռնամուխ է եղել սեփական ուժերով կամավորական նոր շարժում կազմակերպելուն: 1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվել է օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված «Արևելյան լեգեոնը», որի կորիզը կազմում էին Ֆրանսիայի աջակցությամբ Փորթ-Սաիդում ապաստանած 600 մուսալեռցիները[10]:

Կամավորական շարժումը մեծ ոգևորություն է առաջացնում տարագիր հայության, հատկապես ամերիկահայության շրջանում: Համախմբման նկատմամբ ամերիկահայ ազգայինների դրսևորած բարձր գիտակցության շնորհիվ հնարավոր է դառնում 1917 թ. մարտի 16-26-ին Բոստոնում անցկացնել քաղաքական չորս կուսակցությունների միջև համերաշխության բանակցություններ, որոնց ընթացքում էլ կազմակերպվել է Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ)՝ բաղկացած քաղաքական չորս կուսակցությունների (ՍԴՀ, Վերակազմյալ Հնչակյան, ՀՅԴ, ՀՍՌ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից: Առաջին աշխարհամարտի սկսվելուց ի վեր առաջին անգամ էր, որ հայ քաղաքական կուսակցությունները, մասնավորապես ՀՅԴ-ն, միասնականություն են հանդես բերել ազգային կարևոր ձեռնարկների իրականացման գործում: Ամերիկայի հայ ազգային միությունը (ատենապետ՝ իրավաբան Միհրան Սվազլյան) իր գործունեությունը համաձայնեցրել է Փարիզի Ազգային պատվիրակության հետ՝ լինելով նրա լիազոր ներկայացուցչական մարմինն ԱՄՆ-ում, և կարճ ժամանակում ԱՄՆ-ում

---

[8] ***Դեմոյան Հ.,*** *Հայկական ազգային խորհրդանշաններ. զինանշաններ, դրոշներ, պարգևներ, Ե., 2012, էջ 266:*

[9] *Համառոտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան. 1915-1917 թթ., Թիֆլիս (ա.թ.), էջ 7:*

[10] ***Սահակյան Ռ. Գ.,*** *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան. 1919-1921 թթ., Ե., 1970, էջ 115, 116:*

ստեղծել է 187 մասնաճյուղ[11]: Ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ԱՀԱՄ-ը ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում[12]:

Կարճ ժամանակում՝ ընդամենը վեց ամսում (1917 թ. հունիսի 9 - նոյեմբերի 3), ֆրանսիական հովանու ներքո սկսված կամավորական շարժմանն իրենց մասնակցությունը բերելու նպատակով արձանագրվել են 5.000 ամերիկահայեր, սակայն փոխադրական միջոցների սղության պատճառով մեկնելու հնարավորություն է ընձեռվել ընդամենը 1.172-ին (վերապրել է ընդամենը 250 հայ)[13]: Մեծ մասամբ քեսապցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի, չնքուշցի, տիգրանակերտցի, հուսեյնիկցի այդ երիտասարդները ներառել են ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգները[14]: Կամավորագրվածների մեծ մասը կուսակցականներ էին՝ վերակազմյալ հնչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատ հնչակյաններ, ռամկավարներ[15]: «Արևելյան լեգեոն» կամավորագրված ամերիկահայերի կազմում կային նաև մի շարք բարձրաստիճան զինվորականներ (հրամանատարներ Ջիմ Չանգալյան, Հայկ Ազատյան, Տիգրան Պոյաճյան, Ռուբեն Հերյան, Վահան Չուրկենց, Վաղարշակ վրդ. Արշակունի, Ջոն Շիշմանյան և այլք)[16]: Ամերիկահայ կամավորներն «Արևելյան լեգեոնի» իրենց քաջարի հայրենակիցների հետ լուրջ ավանդ են ներդրել ինչպես 1918 թ. սեպտեմբերի

---

[11] Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 11, 12, Սահմանադրութիւն եւ կանոնագրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, Պոսթոն, 1917, էջ 1, 2, 19, 20, **Թէոդիկ,** նշվ. աշխ., էջ 286, **Ճիզմէճեան Մ. Գ.,** նշվ. աշխ., էջ 352, 353:

[12] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ավագյան Ք.,** Իրավաբան-դիվանագետ Միհրան Սվազյանը ԱՄՆ-ում հայ առաջին լոբբիստական կազմակերպության հիմնադիր (Օրենք և իրականություն. Միջազգային իրավաբանական գիտական հանդես, Ե., 2006, մայիս, № 5 (127), էջ 33-35):

[13] Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 27: **Yeretzian, A. S.** A History of Armenian Immigration to America with Special Reference to Conditions in Los Angeles. A Thesis. San Francisco, California, 1923, p. 11.

[14] Յուշամատեան Մուսա Լեռան, խմբ. Մ. Գուշագճեան, Պ. Մատուռեան, Պէյրութ, 1970, էջ 426, The Armenians in Massachusetts, p. 54.

[15] **Պոյաճեան Տ. Յ.,** Հայկական Լեգէոնը. Պատմական յուշագրութիւն, Ուօթրթաուն, 1965, էջ 86:

[16] Յուշամատեան Մուսա Լեռան, նշվ. աշխ., էջ 428, **Պարթեւեան Ս.,** Արարա. Հայկական Լեգէոնը, Աղեքսանդրիա, 1919, էջ 88, 102: Ավելի մանրամասն տե՛ս **Ավագյան Ք.,** Կիլիկիահայությունը ԱՄՆ-ում եւ նրանց նպաստը Բնօրրանին. Ամերիկահայերը եւ □Արեւելեան-Հայկական Լեգէոնը□ (Հասկ. հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, ԺԱ տարի, 2007-2008, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 61-79):

19-ին Պաղեստինում՝ Արարայի անառիկ բարձունքների վրա թուրքական բանակին պարտության մատնելու գործում, նույնպես և Սիրիայի ու Լիբանանի համար մղված մարտերում՝ մեկ ամիս շարունակ գրաված պահելով Պաղեստինը, Լիբանանը:

1916 թ. հոկտեմբերին Լոնդոնում, Սայքս-Պիկոյի ներքին պայմանավորվածության համաձայն, Կիլիկիայի ազատագրումն իրականացնելու և «Կիլիկիան ամբողջութեամբ հայերուն ձգելու»[17] խոստմանն ի պատասխան 1918 թ. դեկտեմբերի 17-19-ին «Հայկական լեգեոնը» ոտք է դրել բաղձալի Կիլիկիա՝ վերահսկելու և պաշտպանելու տարածքի ռազմավարական հենակետերը, հայաբնակ Ադանան, Այնթապը, Մարաշը, Ուրֆան, Հաճընը և այլն[18]:

Արդեն 1919 թ. սեպտեմբերին մասնակի, իսկ 1921 թ. սկզբին վերջնականապես լուծարվել է «Հայկական լեգեոնը»[19]: Այն Հայոց ցեղասպանությունից ընդամենը երկու տարի անց ձևավորված առաջին զուտ հայկական զորամիավորումն էր՝ տարբեր երկրներից (ԱՄՆ, Եվրոպա, Եգիպտոս, Հարավային Ամերիկա, Ավստրալիա և այլն[20]) ժամանած 4.000-5.000 պանդուխտների մասնակցությամբ, արդիական բանակի կազմությամբ, ռազմամթերքով, թեև ֆրանսիական բանակին առընթեր, սակայն՝ նրանից անջատ, իր յուրահատուկ ազգային դիմագծով[21]:

Իր պատմության ընթացքում եվրոպական դիվանագետների կողմից քանիցս հուսախաբ եղած հայությունը, գոտեպնդված ամերիկահայ հայրենակիցների զորեղ աջակցությունից ու հայանպաստ գործունեությունից, Հայ դատի լուծումը կապել է նաև ԱՄՆ-ի ու նրա նախագահ Վուդրո Վիլսոնի հետ՝ հուսալով ամեն տեսակ, այդ թվում՝ քաղաքական, օգնություն: ԱՄՆ-ի Նախագահի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ին Կոնգրեսին ներկայացրած և մերժված՝ Արևմտյան Հայաստանի վիճելի տարածքների նկատմամբ ԱՄՆ-ի մանդատային վերահսկողության հաստատումով ազատագրվելիք

---

[17] **Քէլէշեան Մ.,** Սիս-Մատեան. Պատմական, բանասիրական, տեղագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրութ, 1949, էջ 594:

[18] **Սահակյան Ռ. Գ.,** նշվ. աշխ., էջ 118, Forgotten Heroes. The Armenian Legion and the Great War. An Exhibit Commemorating the 83rd Anniversary of the Armenian Legion's Victory on September 19, 1918 at Arara (Palestine). September 23-December 31, 2001. Prepared by Barbara Merguerian (ALMA), Watertown, 2001, p. 7.

[19] **Ճիզմէճեան Մ. Գ.,** նշվ. աշխ., էջ 358, 359, 449, 472, Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., 1981, էջ 578, Յուշամատեան Մուսա Լերան, էջ 446:

[20] **Պոյաճեան Տ. Յ.,** նշվ. աշխ., էջ 71, Forgotten Heroes, p. 3.

[21] **Անդրէասեան Ա.,** Խոհեր գրական, ազգային եւ հասարակական, հ. Բ, Լոս Անճելըս, 1976, էջ 373:

տարածքների քարտեզում մեծապես տեղ էին գտել նաև Ամերիկայի հայ ազգային միության առաջարկած տարածքային խմբագրումները[22]*:*

Այնպես որ, Առաջին աշխարհամարտի տարիներին ամերիկահայությունը, կուսակցական տարաձայնություններով հանդերձ, ընդհանուր առմամբ միակամ էր հայրենի երկրին ու ժողովրդին սատարելու նպատակով ցուցաբերած նյութական, մարդկային, զինական, քաղաքական ու դիվանագիտական ջանքերում, ինչպես նաև նախ Ռուսաստանի, ապա բոլշևիկյան հեղաշրջումից հետո ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ էր կապում Հայաստանի ազատագրման հույսը: Սակայն 1914-1918 թթ. ընթացքում և հետո տեղի ունեցած աշխարհաքաղաքական զարգացումներն արգելք դարձան նաև ամերիկահայության՝ արյան գնով ձեռք բերված նվաճումները՝ հողապահպան ջանքերը, միջազգային իրավական առումով ամրագրելու համար:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939-1945 թթ.) *սփյուռքահայության, այդ թվում նաև ամերիկահայության առաջադեմ հատվածը, կիսելով ԱՄՆ-ին և Մայր Հայրենիքին բաժին ընկած դժվարությունները, անմնացորդ մարտնչել է ընդդեմ ֆաշիզմի, ընդդեմ բռնության և իր զգալի ավանդը ներդրել հաղթանակի նվաճման գործում՝ դրա հետ կապելով նաև Հայ դատի վերանայման և հողային պահանջատիրության հույսերը*[23]*:*

Պատերազմի ամենավճռական տարիներին աշխարհով մեկ սփռված հայությունը միավորվել է Ազգային ճակատներում, որոնց գործուն կազմակերպություններից էր նաև 1944 թ. մարտի 19-ին Նյու Յորքում վերջնականապես ձևավորված Ամերիկահայ ազգային խորհուրդը՝ ամերիկահայ տարբեր կազմակերպությունների միասնական ճակատը (բաղկացած՝ ՌԱԿ, ՄԴՀԿ, Ամերիկահայ առաջադիմական միության, ՀԲԸՄ, հարանվանական եկեղեցիների, տարբեր հայրենակցական և այլ միությունների ներկայացուցիչներից), որը երկրով մեկ տարածված իր բազմաթիվ մասնաճյուղերի միջոցով հանգանակություններ, նվիրատվություններ և այլ միջոցառումներ է կազմակերպել՝ ի նպաստ ամերիկյան և խորհրդային բանակների, Կարմիր խաչի և Մայր Հայրենիքի, իսկ պատերազմի ավարտից հետո (մինչև 1950 թ.) ձեռնամուխ է եղել նաև նորակազմ ՄԱԿ-ի շրջանակում Հայ դատին արդարացի լուծում տալու

---

[22] ***Ճիզմէճեան Մ. Գ.,*** *նշվ. աշխ., էջ 376: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս* ***Ավագյան Ք.,*** *Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում հայ առաջին լոբբիստական կազմակերպությունների հիմնադիր Միհրան Սվազլյանը և Նախագահ Ուդրո Ուիլսոնը (Մովսես Խորենացի, 2007, № 1-2, էջ 22-29):*

[23] *Ավելի մանրամասն տե՛ս* ***Ավագյան Ք.,*** *Ամերիկահայերի նպաստը Երկրորդ աշխարհամարտում հաղթանակի նվաճման գործին (Հայկական բանակ, Ե., 2005, № 2-4, Հատուկ թողարկում, էջ 145-167):*

խնդրին[24]: Ամերիկահայ ազգային խորհրդի հայրենանվեր ջանքերի շնորհիվ 1944 թ. գարնանը ֆաշիզմին հերոսաբար դիմագրաված՝ ԽՍՀՄ ազատագրված տարածքների բնակչության համար ուղարկվել է 75 հազար դոլար արժողության 25 հազար նվեր-ծանրոց, Հայաստանի համար՝ մեկ նավ հագուստեղեն: Բացի այդ, Ռուսաստանի օգնության կոմիտեի միջոցով Կարմիր բանակի համար առաքվել է 50 հազար դոլար, ինչպես նաև 87 հազար դոլար արժողության դեղորայք: Խորհրդային Միության պատերազմական ջանքերին աջակցող Ամերիկա-հայկական կոմիտեն մինչև 1943 թ. հանգանակել է. Կարմիր բանակի համար՝ շուրջ 56 հազար դոլար, կարիքավորների համար՝ 29 հազար դոլար, Հայաստանի համար՝ 11 հազար դոլար, 9 հազար դոլար արժողության 2.700 կտոր բրդյա գործվածքեղեն և այլն[25]:

Ամերիկահայությունը, անմնացորդ օժանդակելով պատերազմից ուժասպառ Խորհրդային Միությանը և Մայր Հայաստանին, իր զգալի ներդրումն է ունեցել նաև սփյուռքի առաջադեմ ուժերի կողմից «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման գործում: Ամերիկահայության արագ և կազմակերպված ջանքերի շնորհիվ 1943 թ. մարտից մինչև 1944 թ. մարտ ընկած ժամանակահատվածում այդ նպատակով ԱՄՆ-ում հանգանակվել է առնվազն 115 հազար դոլար «Սասունցի Դավիթ» տանկային առաջին, ապա՝ 40 հազար երկրորդ շարասյուները կազմելու համար, որոնք, շատ կարճ ժամանակում շարք մտնելով, մասնակցել են խորհրդային երկրի ազատագրական հաղթարշավին: Բացի այդ, 173 հազար դոլար հատկացվել է Կարմիր խաչի հիմնադրամին: Իսկ 1945 թ. «Զորավար Բաղրամյան» տանկային նոր շարասյունը կազմելու համար սկսված հանգանակությունը դադարել է Հայրենական մեծ պատերազմի ավարտի հետ[26]: Ամերիկահայոց հոգևոր առաջնորդ Գ. արք. Հովսեփյանի ջանքերով կազմակերպված Հայկական հանձնախումբը մեկ տարվա ընթացքում Կարմիր բանակի, Մայր Հայրենիքի և սփյուռքի հայրենակիցների համար հանգանակել է 120 հազար դոլար, իսկ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար՝ 85 հազար[27]:

***Ղարաբաղյան շարժման տարիներին (1988-1994 թթ.)** արտերկրից ևս հայ կամավորներ են մասնակցել հայրենի բնօրրանի ազատագրմանը, իհարկե, ոչ նախկին ստվար թվաքանակով (ավելի քան 10 միլիոնանոց սփյուռքից՝ մի*

---

[24] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 154, **Անդրէասեան Ա.,** նշվ. աշխ., էջ 11-12, 119-120:*

[25] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 154, **Աբրահամյան Ա. Գ.,** Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Ե., 1967, էջ 402, Ամերիկեան Սովետ բարեկամութիւն, Նիւ Եորք, 1943, էջ 48:*

[26] *Հայ ժողովրդի պատմություն, էջ 158, **Աբրահամյան Ա. Գ.,** նշվ. աշխ., էջ 403:*

[27] ***Ա. քինյ.Աշճեան,** Վիճակագրոյց եւ պատմութիւն առաջնորդական թեմին Հայոց Ամերիկայի. 1948, Նիւ Յորք, 1949, էջ 45:*

քանի տասնյակ հայ) և ոչ նախկին համահամայնքային կամ կուսակցական կազմակերպվածությամբ, հակառակ այն բանին, որ 1985 թվականից Խորհրդային Միությունում տեղի ունեցող ազատականացման գործընթացները, ապա 1991 թվականից ազատ և անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծումը պիտի որ ոգևորության ալիք բարձրացնեին նաև տասնամյակներ շարունակ «կարմիր հայրենիքից» փոքր-ինչ սառած և «Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանի» գաղափարներով հայապահպանության ջանքեր գործադրած ազգային կառույցների շրջանում:

Արցախյան ազատամարտին իրենց մասնակցությունը բերած սակավաթիվ սփյուռքահայ կամավորների շարքում ուրույն բաժին ունեցան արտերկրից և մասնավորապես ԱՄՆ-ից ժամանած կամավորները: Նրանք Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի [ASALA – Armenian Secret Army for the Liberation of Armenia] (1975 թ.) երբեմնի անդամներն էին՝ պատմական արդարհատույցի հույսով և ազգային ոտնահարված արժանապատվության վերականգնման վրեժով լցված:

1990 թվականից Արցախի պաշտպանությանը զինվորագրված նահատակ հրամանատար Մոնթե (Ավո) Մելքոնյանը (1957 թ., Ֆրեզնո, Կալիֆոռնիա - 1993 թ., Աղդամ) հայ, մասնավորապես՝ սփյուռքահայ քաջարի ու անձնուրաց կամավորի, հրամանատարի առասպելական տիպար է դարձել, որի ղեկավարության ներքո միմիայն հաղթանակներ են արձանագրվել: 1991 թ. նա հիմնել է «Հայրենասիրական ջոկատը», իսկ արդեն 1992 թ. նրան էր վստահված Մարտունու շրջանի շտաբի պետի պարտականությունը, պաշտպանական շրջանի հրամանատարն էր, որի օրոք այն դարձավ ամենապաշտպանվածն ու ամենամարտունակը: Մ. Մելքոնյանը մասնակցել է ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի (Էրքեջ, Բուզլուխ, Մանաշիդ, Կարաչինար), Մարտակերտի, Մարտունու շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: 1992 թ. սեպտեմբերին, 1993 թ. մարտ, մայիս, հունիս ամիսներին Մ. Մելքոնյանի ղեկավարությամբ ազատագրվել են նաև Մարտունու (գրավված գյուղեր), Քարվաճառի, Աղդամի շրջանները և այլն: Արցախի ազատագրման գործում իր անօրինակ սխրագործությունների համար նա հետմահու արժանացել է Հայաստանի Ազգային հերոսի և Արցախի ազգային հերոսի, ՀՀ բանակի փոխգնդապետի (1994 թ.) կոչումների, ինչպես նաև պարգևատրվել՝ ՀՀ «Հայրենիք», ԼՂՀ «Ոսկե արծիվ», «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններով[28]: «Իմ կենացը մի խմեք, այլ՝ իմ գործը շարունակեք», - ասում էր Մոնթեն: Իսկ հայրենի հողի ազատագրումը համարում էր յուրաքանչյուր հայի սրբազան պարտականությունը:

---

[28] http://en.wikipedia.org/wiki/Monte_Melkonian. *Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հանրագիտարան, գլխ. խմբ.՝ Այվազյան Հ., Ե., 2004, էջ 481:*

Մեկ այլ ամերիկահայ, հերոսաբար զոհված հրամանատար ֆրեզնոյաբնակ Կարո Քահքեջյանը[29] (1962 թ., Հալեպ - 1993 թ., «Պուշկենյալ» բարձունք, ԼՂՀ, Մարտակերտի շրջան) 1991 թ. Երևանում կազմել և ղեկավարել է «Խաչակիրներ ջոկատը», որն անուրանալի հաջողություններ է արձանագրել պատերազմում. մինչև 1993 թ. մասնակցել է ՀՀ Արարատի, Տավուշի, ԼՂՀ Ասկերանի, Մարտակերտի, Լաչինի, Քելբաջարի, Շահումյանի, Շուշիի շրջանների, Բերդաձորի ենթաշրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին, հաջողությամբ իրականացրել հետախուզական առաջադրանքներ, արտերկրից Արցախ է ներկրել մեծ քանակությամբ մարդասիրական օգնություն և դեղորայք[30]: Նա առաջնորդվում էր «Իմ կուսակցությունը իմ երկիրն է» նշանաբանով:

Արցախյան ազատամարտում անձնուրաց կռվել են նաև ամերիկահայեր Շահե Աճեմյանը, Արան, Շահիկը, Վաչիկը, Սաքոն[31] և ուրիշներ: Արցախյան ազատամարտում ԱՄՆ-ի հայ համայնքը ցուցաբերել է զգալի նյութական աջակցություն, ինչպես նաև՝ առաքել ռազմական տեխնիկա, հանդերձանք, դեղորայք և այլն:

Ամերիկահայերի մասնակցությունն ու աջակցությունը Արցախյան ազատամարտին շատ ավելին կարող էր լինել, եթե սփյուռքի քաղաքական կառույցները ևս, որոնք կոչված են համախմբելու հայությանն ազգային գերխնդիրների շուրջ, անցյալ դարասկզբի հայ կամավորական շարժման օրինակով իրենց ողջ կարողությունը ներդնեին օտար գերության մեջ գտնվող պատմական Հայրենիքի մի փոքրիկ հատվածն ազատագրելու գործում: Այդ մասին իրենց վրդովմունքն են արտահայտել նաև ամերիկահայ շատ կամավորներ:

«Անհայրենիք» հայապահպանության դրսևորումը ԱՄՆ-ի հայության շրջանում

Ինչպես արդեն նշվեց, Առաջին աշխարհամարտի տարիներին ամերիկահայությունը, կուսակցական տարաձայնություններով հանդերձ, համախոհ էր հայրենի երկրին ու ժողովրդին սատարելու հարցերում և Հայաստանի ազատագրման հույսը կապում էր նախ, Ռուսաստանի, ապա՝ բոլշևիկյան հեղաշրջման պատճառով, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ: Սակայն 1914-1918 թթ. ընթացքում և հետո տեղի ունեցած աշխարհաքաղաքական զարգացումներն արգելք են դարձել նաև ամերիկահայության արյան գնով ձեռք բերված նվաճումները՝ հողապահպան ջանքերը, միջազգային իրավական առումով ամրագրելու համար:

***Խորհրդային Հայաստանի հետ** սփյուռքի տարբեր գաղթօջախների*

---

[29] ***Պետրոսեան Ա.,*** *Սփիւռքահայերը մարտադաշտի վրայ. Խաչակիրներ ջոկատը, Ե., 2000, էջ 64:*

[30] *Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, էջ 265-266, 659, http://en.wikipedia.org/wiki/Garo_Kahkejian.*

[31] ***Պետրոսեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 9:*

հայությունը հարաբերություններ է հաստատել հենց սկզբից՝ դեռևս 1921 թ. Երևանում ստեղծված Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) (նախագահ՝ Հովհաննես Թումանյան) միջոցով՝ «նպատակ ունենալով սփիւռքահայութենէն օգնութիւն հասցնել աւերակուած եւ սովի ու հիւանդութիւններու ճիրաններուն մէջ տուայտող մայր հայրենիքին»[32]: ՀՕԿ-ն իր մասնաճյուղերն է ունեցել սփյուռքահայ տարբեր գաղթօջախներում՝ «Հայուն համար Հայաստանէն դուրս չի՛ք փրկութիւն» նշանաբանով[33]:

Հայոց ցեղասպանություն հետևանքով հայրենազրկված և աշխարհով մեկ սփռված արևմտահայ վերապրածների զգալի հատվածը դիմել է հողապահպանության մեկ այլ դրսևորման՝ պարբերական հայրենադարձության (սկզբում՝ չհամակարգված, ապա՝ համակարգված բնույթի), որի կազմակերպման գործընթացը սփյուռքում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, իրականացվել է քաղաքական, կուսակցական-գաղափարական թեժ պայքարի պայմաններում[34]:

Գաղափարական վերոհիշյալ պայքարի մի թևը հիմնականում ներկայացնում էին ՌԱԿ-ի, ՍԴՀԿ-ի, ՀԲԸՄ-ի ներկայացուցիչները, անկուսակցականներ և այլ հայաստանամետ-հայրենասեր անձինք, որոնք հայտնի էին առաջադիմականներ («Հայաստանջի»[35]) անունով, իսկ մյուս թևը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման փաստին և ազգահավաքի միջոցով հողապահպանությանն ի հեռուկս, սփյուռքում «անհայրենիք պետություն» ստեղծելու և օտար հողում հայապահպանության անհեռատես գաղափարի կողմնակից ՀՅԴ կուսակցությունն էր:

Առաջին ուղղության ներկայացուցիչները, իրատեսորեն գնահատելով ստեղծված նոր հանգամանքները, Խորհրդային Հայաստանը համարում էին «ամենայն հայոց պետություն», իսկ տվյալ պահին հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման երաշխիքը՝ «ամենանպաստավորն ու տրամաբանականը ռուսական օրիանթասիոնը» ԽՍՀՄ կազմում[36]: Նրանք Խորհրդային Հայաստանի զարգացումն ու ամրապնդումը համարում էին նաև

---

[32] ***Եպիսկոպոսեան Ա.,*** *Եգիպտահայ մշակոյթի պատմութիւն, Գահիրէ, 1981, էջ 27:*

[33] ***Սվազլյան Գ.,*** *Հայրենիքիս համար, Ե., 1965, էջ 28:*

[34] *Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս* ***Ավագյան Ք.,*** *Հայրենադարձության կազմակերպման նախապայմանները և գործընթացը Եգիպտոսում (1947-1948 թթ.). Եգիպտահայ Գառնիկ Սվազլյանի Ներգաղթի գաղափարախոսության դասերը (1946-1948 թթ. Հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր. Զեկուցումների ժողովածու, Ե., 2009, էջ 120-140):*

[35] ***Սվազլյան Գ.,*** *նշվ. աշխ., էջ 106: «Հայաստանջի» – առաջադիմականների՝ ժողովրդի մեջ տարածված անվանումը:*

[36] ***Թոփուզյան Հովհ.,*** *Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Ե., 1978, էջ 243:*

արևմտահայության դատի լուծման գրավականը՝ «միակ կռվանը», որը կարող էր, «երբ պայմանները ներեն, առանց նոր արյունահեղությանց տեր դարձնել հայ ազգը իր պատմական անժխտելի իրավունքներուն», ուստի և սփյուռքահայությանը կոչ էին անում «ոչ մեկ պայքար մղել խորհրդային իշխանության դեմ, կարելի ամեն միջոցներով ուժ տալ» Խորհրդային Հայաստանին և ներգաղթին[37]:

ՀՅԴ-ն, որի կուսակցական ու պետական մի շարք գործիչներ Հայաստանի Առաջին հանրապետության (1918-1920 թթ.) անկումից հետո հիմնականում հաստատվել էին Եգիպտոսում, ընդհակառակը, Հայաստանում պատմական պարտադրանքով հաստատված խորհրդային կարգերը գնահատում էր որպես «ռուսական աշխարհակալություն», ցարական լուծը «գերազանցող բռնակալություն», որի տիրապետության ներքո հայ ժողովուրդը դատապարտված է դանդաղ մահվան «խորհրդային դժոխքում», «Հայաստան-վայաստանում»[38]: Ուստի և ամեն կերպ խոչընդոտել են ներգաղթին ու հայրենիքի վերաշինությանն աջակցելու ջանքերին՝ դրան հակադրելով համազգային կազմակերպություն՝ համագաղութային համագումար հրավիրելու գաղափարը, որը պիտի ներառեր սփյուռքի բոլոր քաղաքական ուժերին՝ դառնալով Խորհրդային Հայաստանին հակակշիռ գաղութահայ քաղաքական ուրույն միավոր: Գաղութահայ բարձրագույն կազմակերպությունը պիտի ունենար իր ճյուղավորումները՝ գավառային, շրջանային մարմիններ, որոնք միավորված պիտի լինեին կենտրոնական խորհրդի սահմանադրությամբ[39]: Ըստ նրանց, «հայրենիքը չէ բացառաբար, որ հիմ պիտի դառնա որևէ հավաքականության ամբողջացման, պահպանման և իրավական գոյության», հայրենիքի դերը կարող է փոխարինել «ազգությունը, որ իր շուրջն է համախմբում բոլոր նրանց, որոնք միևնույն ազգի պատկանելության զգացումը ունեն»[40]: Յուրաքանչյուր գաղութահայ հյուրընկալ երկրի նկատմամբ իր պարտականությունները պիտի կատարի «առանց երբեք իր որևէ քայլին ազգային (հայկական) կերպարանք տալու և իր պայքարը կապելու մայր հայրենիքի (Հայաստանի) ճակատագրին»[41]: Համագաղութային ծրագրի մաս էր կազմում նաև Ամենայն հայոց կաթողիկոսությունը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից «ժամանակավորապես» Երուսաղեմ տեղափոխելու հարցը՝ նպատակ ունենալով Ազգային սահմանադրության անունով գրավել նաև արտասահմանյան թեմերը և ստեղծել «վերին մարմին»[42]: Ամերիկահայ ՀՅԴ կուսակցական վերնախավի շնորհիվ հնարավոր էր դարձել օգնել ֆաշիստական ճամբարներում բռնադատված

---

[37] Նույն տեղում:

[38] «

[39] Նույն տեղում, էջ 249-250:

[40] Նույն տեղում, էջ 250:

[41] Նույն տեղում:

[42] Նույն տեղում, էջ 255, 257:

բազմահազար հայորդիներին. սկզբում՝ նյութապես ու բարոյապես, ապա նաև՝ նրանց տեղափոխելով ու վերաբնակեցնելով ԱՄՆ-ում, ինչպես նաև Կանադայում, Հարավային Ամերիկայում և Ավստրալիայում[43]*: Վաշինգտոնի պաշտոնական հանձնարարությամբ, քաղաքական այդ կարևոր առաջադրանքը դրված էր «Միջազգային չափանիշներով քաղաքական գործիչ» ճանաչված Ջորջ Մարտիկյանի վրա*[44]*: Նա նաև Սան Ֆրանցիսկոյի «Օմար Խայամ» ճաշարանի տերն էր և Երկրորդ աշխարհամարտի տարիներին ԱՄՆ-ի Զինված ուժերի նախարարության հանձնարարությամբ ղեկավարում էր տարբեր մայրցամաքներում տեղակայված ամերիկյան զորքերի պարենավորումը կարգավորելու հարցերը և բանակային կերակուրների պատրաստման որակը բարելավելու պատասխանատու աշխատանքները: Ջ. Մարտիկյանը եվրոպական տարբեր երկրներ և մասնավորապես Գերմանիա իր առաքելությունների ընթացքում այցելել է տեղի ճամբարները, հանդիպել հարյուրավոր հայազգի գերիների և փախստականների հետ, որոնք, զգուշանալով երկրում հետպատերազմյան շրջանում ստալինյան անխուսափելի հալածանքներից ու աքսորից, չէին համարձակվում վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը:*

1947 թ. Սան Ֆրանցիսկոյում կազմակերպվում է «Հայրենազուրկ Հայերի Օգնության Ամերիկյան Ազգային Կոմիտեն» - ԱՆՀԱ (American National Committee to Aid Homeless Armenians - ANCHA) (նախագահ՝ Ջորջ Մարտիկյան, փոխնախագահ՝ փաստաբան Սուրեն Սարոյան): Կամավոր հիմունքների վրա գործող այդ կազմակերպությունը, հենվելով 1948 թ. ԱՄՆ Կոնգրեսի կողմից հաստատված՝ «Տեղահանված մարդկանց մասին» (DP - Displaced Persons' Act) օրենքի վրա, ԱՄՆ-ի տարբեր նահանգներում տարածված իր մասնաճյուղերի, Հայ Օգնության Միության և ազգային այլ կազմակերպությունների տրամադրած նյութական միջոցներով ամերիկյան բեռնատար «Նեյվի» ռազմանավերով և «Դուգլաս» օդանավերով ընդհուպ մինչև 1952 թ. իրականացրել է պատերազմի տարիներին Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում հայտնված ավելի քան 4.500 հայրենազուրկ ու տարագիր հայերի փոխադրումն ու բնակեցումը ամերիկյան հողում[45]*:*

Երկրորդ աշխարհամարտի հետևանքով Եվրոպայում «անհայրենիք» կարգավիճակում հայտնված հայերի դրությունը կանոնավորելու նպատակով ստեղծված ԱՆՀԱ-ն 1960-70-ական թթ. կրկին վերսկսել է իր գործունեությունը այս անգամ արաբ-իսրայելական հակամարտությունների գոտուց՝ Մերձավոր

---

[43] **Wertsman V.** *The Armenians in America. 1618-1976. A Chronology & Fact Book.* Ethnic Chronology Series – No. 27, New York, 1978, p. 16.

[44] **Avakian A. S.** *The Armenians in America. Minneapolis, 1977, p. 55.* ***Ղազար-Չարըզ,*** *Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում, Պէյրութ, 1957, էջ 772-773:*

[45] ***Մարտիկեան Ճ.,*** *Երգն Ամերիկայի, Պէյրութ, 1957, էջ 329-333, 351, 352:* ***Barsumian N.,*** *Stowaway to Heaven. Ohio, 1961, p. 151.*

և Միջին Արևելքի երկրներից, ինչպես նաև Խորհրդային Հայաստանից 18.500 հայ փոխադրելով ԱՄՆ, ընդ որում՝ 512 ընտանիք տեղավորվել է Կալիֆորնիայի նահանգի Լոս Անջելես քաղաքում[46]*:*

Ժամանակ առ ժամանակ սփյուռքի առանձին ուժեր իրենց գաղափարական պայքարի օբյեկտ դարձած երբեմնի «կարմիր հայրենիքը» պիտակավորելուց անցնում են նոր հասարակարգ թևակոխած և դրա հետ կապված անխուսափելի դժվարություններ դիմակայող, այժմ արդեն ազատ ու անկախ հայրենիքը պիտակավորելուն՝ կրկին ինչեցնելով «անհայրենիք պետություն» ստեղծելու և «համասփյուռքյան համագումար» հրավիրելու կոչեր (2010 թ. Ժնևում հայ-թուրքական արձանագրությունները ստորագրելուց հետո, ապա 2012 թ.՝ Սիրիայից հայերի սաստկացող արտագաղթի պայմաններում): Բոլորովին վերջերս՝ 2012 թ. նոյեմբերի 11-ին, ԱՄՆ-ի կառավարությունը, արձագանքելով չորս երևելի ամերիկահայ իրավաբանների դիմումին, վերանայել է նախկինում Հայրենիքի անվտանգության բաժանմունքի Միացյալ Նահանգների Քաղաքացիության և ներգաղթի ծառայության (ՄՆՔՆԾ) որոշումը սիրիահայերին սոսկ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակ» (Temporary Protected Status - TPS) տրամադրելու մասին և արտոնել է սիրիահայերին «Իրավազրկության վիզա» (Visa Waivers) շնորհել[47]*:*

Շատ չանցած նրանց անհաշիվ բարեկամներ ու հարազատներ ԱՄՆ-ից և այլ վայրերից իրենց աջակցությունն են հայտնում Միացյալ Նահանգների կառավարությանը՝ սիրիահայերին ԱՄՆ մուտք գործելու դյուրություն ապահովելու համար: Մինչդեռ հարկ էր, որ սփյուռքահայությունը միասնականություն դրսևորեր, որպեսզի տնական պատերազմի հետևանքով ավերվող Սիրիայից մեր հայրենակիցներին տեղափոխելն ու բնակեցնելն իրականանա Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում՝ տեղական կառավարությունների գործունեությանը զուգընթաց, այլ ոչ թե՝ ԱՄՆ-ում, ինչպես նաև նյութական զգալի աջակցություն ցուցաբերվեր արտերկրի մեր հայրենակիցներին հայրենիք տեղափոխելու, տեղավորելու և նրանց զբաղվածությունն ապահովելու համար:

Նույնիսկ այն պարագայում, երբ Քուվեյթը Իսլամական գթասիրական կոմիտեի միջոցով նյութական զգալի՝ 100 հազար դոլար, աջակցություն է ցուցաբերել Հայաստանում հանգրվանած սիրիահայերին[48]*, քաղաքական-կուսակցական հատվածական գաղափարախոսությունը, ցավոք, այսօր ևս*

---

[46] ***Փիրումյան Ռ., Ավագյան Ք.,*** *Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Հայ Սփյուռք Հանրագիտարան, Ե., 2003, էջ 37):*

[47] *Government responds to Prominent Armenian-American Lawyers call upon U.S. Government to issue visa waivers for Syrian-Armenians - http://www.centerarnews.com/, Center for Armenian Remembrance. Press Release, November 12, 2012. U.S.*

[48] *Kuwait to Allocate $100,000 to Syrian Armenians in Armenia - http://news.am/eng/news/130510.html, November 29, 2012.*

սփյուռքի առանձին շրջաններին հեռու է պահում դեպի հայրենիք կողմնորոշվելուց՝ նախապատվությունը տալով արտերկրի հայությանը օտարության մեջ «հայրենիքներ» (վերա)կառուցելու անհեռանկար և իմաստազուրկ գործունեությամբ զբաղեցնելուն, մինչդեռ Հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը իր զավակների անսակարկ աջակցության կարիքն ունի:

Ամփոփելով նշենք, որ Առաջին աշխարհամարտը միջազգային դավադիր ուժերի համար հարմար առիթ էր իրենց ծավալապաշտական ծրագրերն իրականացնելու: Դրանք ծրագրել էին հայ ժողովրդի բնաջնջումն իր պատմական բնօրրանում՝ տարածքը քրիստոնեաթափելու նպատակով, հետևաբար, չէին կարող թույլ տալ, որ հաղթանակող Ռուսաստանի ու Ֆրանսիայի առաջադեմ ուժերի աջակցությամբ տեղացի և արտերկրի հայ կամավորների մղած ազատագրական արդար ու հաղթական հողապահպան պայքարն ավարտվեր հայկական պատմական տարածքներն իրենց օրինական տերերին՝ հայերին վերադարձվելով: Այնպես որ, անցյալ դարասկզբին հայ կամավորական շարժումը, չնայած իր արձանագրած ռազմական հաջողություններին, դատապարտված էր, իսկ պետականազուրկ և տեղահանության հետևանքով աշխարհով մեկ սփռված հայության ազգային կառույցները, հակառակ քաղաքական ասպարեզում իրենց գործադրած ջանքերին, ի զորու չէին զերծ մնալու միջազգային խարդավանքներից:

Անցած մեկ դարի ընթացքում (Առաջին աշխարհամարտից մինչև Արցախյան ազատամարտ) տեղի ունեցած միջազգային պատմաքաղաքական զարգացումները, համահարթեցնող համաշխարհայնացումը, ինչպես նաև սերնդափոխվող սփյուռքի անխուսափելի ձուլումը քանակական և որակական փոփոխությունների են ենթարկել և շարունակում են ենթարկել հայրենի բնօրրանի ազատագրմանն ու հայրենիքի սատարմանն ուղղված ողջ սփյուռքի թե՛ մարդկային և թե՛ նյութական հնարավորությունները:

Ուստի, վաղուց արդեն ժամանակն է, որ սփյուռքի մեր հայրենակիցներն օտար հողերում «անհայրենիք» հայապահպանության ինքնախաբեական ու աննպատակ գաղափարախոսությունից և ինքնասպան գործելաոճից անցնեն իրատեսական և գործնական՝ հողապահպանության, հայրենաշինության և ազգահավաքման գործողությունների, քանի որ Հայրենիքի շահը վեր է ամեն ինչից:



Հողապահպանության՝ դեպի Հայրենիք ներգաղթի (1943 թ.) և «անհայրենիք» հայապահպանության՝ «Դաշնակունեանց հայրենիք մը Զուլուլանդի մէջ» (1946 թ.) ընկալումներն ըստ հայրենադարձ գրող-հրապարակախոս, հասարակական գործիչ Գառնիկ Սվազլյանի (Պահակ)

ИДЕЯ СОХРАНЕНИЯ РОДИНЫ И АРМЯНСТВА “БЕЗ РОДИНЫ” В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ США

АВАКЯН К.Р.

Резюме

Идея сохранения родины и национальной идентичности армян неоднозначно воспринимается представителями армянской диаспоры, в частности, в США, что обусловлено изменчивостью позиций армянских политических партий в отношении отчизны, а также сменой поколений. В результате сказанного в наши дни идея Родины и национальности трансформировалась полностью, что нашло отражение в деформации национального самосознания.

На протяжении столетия (с начала XX в. до начала XXI в.) прежнее восприятие политико-стратегических интересов Армении постепенно

сменилось идеей первенства глобализации, а в отдельных случаях даже превосходства стратегических интересов стран, в которых обосновались армяне. В основном эти интересы противоречат интересам Армении и региона в целом.

Настало время, чтобы армяне диаспоры перешли от обманчивой и бесцельной идеи сохранения армянства “без родины” к реальному и практическому сохранению нации путем ее консолидации на родной земле, поскольку интересы отчизны превыше всего.

THE IDEA OF PRESERVING HOMELAND AND “HOMELESS” ARMENIANNESS IN THE ARMENIAN COMMUNITY OF THE USA

K. AVAKIAN

Abstract

The ideas of preserving Homeland and Armenianness have different perception and demonstration in the Armenian Diaspora, especially in the USA. This can be explained by the changeable attitude of the Armenian political parties towards Motherland, as well as the changes of generations that have been taking place in the Diaspora throughout decades. As a result, the ideas of Fatherland and nationality have totally transformed.

From the beginning of the 20th century to the beginning of the 21st century, the previous perception of political-strategic interests of Armenia was gradually replaced by the priorities of globalization and the strategic interests of the countries Armenians live in. Generally, these interests contradict the interests of Armenia and the region.

It is high time the Diaspora Armenians made a transition from self-deceptive and aimless ideology of keeping “homeless” Armenianness in the foreign lands to a realistic and practical way of keeping the Land, building Fatherland and preserving the nation, because the interests of Motherland come first.